ԹՎԻՆԻՆԳ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

AM/14/ENP/ST/15

Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II

ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգի վերաբերյալ

Գործողություն 1.5. Կայքի բարելավում I

Առաքելությունն իրականացրել է

Պրն. Յեսպեր Էլեմոուսե Յենսենը Դանիայի վիճակագրությունից

2016թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 2-ը

Վերջնական տարբերակ

ՀՀ Ազգային վիճակագրության ծառայություն

STATISTICS DENMARK

<u>Փորձագետի կոնտակտային տվյալներ</u>

Յեսպեր Էլեմոուսե Յենսեն
Դանիայի վիճակագրություն
Սեյրոգադե 11
DK-2100 Կոպենհագեն Ø
Դանիա
Հեռ. +45 3917 3244
Էլ-փոստ. jej@dst.dk

Բովանդակություն

1. Ընդհանուր մեկնաբանություններ 4
2. Գնահատում և արդյունքներ 5
3. Եզրակացություններ և առաջարկություններ 156
Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք 188
Հավելված 2. Առաքելության ծրագիր ..... **Fejl! Bogmærke er ikke defineret.**9
Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք 20
Հավելված 4. Ընտրված սկզբունքներ և ցուցանիշներ Փորձառության օրենսգրքից 21

Հապավումներ

API (ՀԾԻ)	Հավելվածի ծրագրավորման ինտերֆեյս
CMS(ԲԿՀ)	Բովանդակության կառավարման համակարգ
CoP (ՓՕ)	Փորձառության օրենսգիրք. Եվրոստատ
ԵՄ	Եվրոպական միություն
ԱՎՀ	Ազգային վիճակագրական համակարգ (պաշտոնական վիճակագրության)
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՈԱՇ/QAF	Որակի ապահովման շրջանակ

1. Ընդհանուր մեկնաբանություններ

Այս առաքելության զեկույցը պատրաստվել է «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – փուլ II» Թվինինգ ծրագրի շրջանակներում: Սա բաղադրիչ 1-ի վեցերորդ գործողությունն էր, որի համար պլանավորված քայլերն իրականացվել են համաձայն ժամանակացույցի:

Առաքելության նպատակ էր.

- Քննարկել կայքի բարելավման, մասնավորապես՝ սպառողների համար դրա հարմարավետության և օգտագործելիության հարցեր
- Ընթացիկ ցանցային հարթակի գնահատում՝ ծրագրի շրջանակներում պոտենցիալ բարելավումների առնչությամբ

ԱԵ փորձագետն իր երախտիքն է հայտնում բոլոր պաշտոնատար անձանց և անհատներին, ում հետ հանդիպել է: Փորձագետի Հայաստանում գտնվելու ընթացքում նշված անձանց կողմից ստացված աջակցությունը և արժեքավոր տեղեկատվությունը մեծապես հեշտացրել են նրա աշխատանքը: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տեսակետները և դիտարկումները պատկանում են խորհրդատուին և որևէ կերպով չեն արտահայտում ԵՄ, ՀՀ ԱՎԾ կամ Դանիայի վիճակագրության տեսակետները:

ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից առանձնացվել է երկու հարց էլեկտրոնային տվյալների հավաքագրման և ՀՀ ԱՎԾ աշխատակիցների կողմից նշված SDMX համակարգի օգտագործման վերաբերյալ՝ որպես ՀՀ ԱՎԾ ցանցային աշխատանքի բարելավման ուղղություններ: Սույն զեկույցի հեղինակի կարծիքով երկու հարցերն էլ խիստ նպատակային և արդյունավետ են, սակայն դրանք չափազանց ծավալուն և պահանջկոտ են, որպեսզի հասցեագրվեն Թվինինգ ծրագրի շրջանակներում: Կազմակերպության տեսանկյունից ո՛չ տվյալների հավաքագրումը, ո՛չ էլ տվյալների փոխանակումը (SDMX) տարածման բաժնի աշխատանքների մաս չեն կազմում: Սույն հարցերը թեմատիկ բաժինների, մասնավորապես՝ մեթոդաբանական և SS բաժինների ուշադրության կարիքն են զգում:

Սույն առաքելությունից արվել է երեք եզրակացություն.
1. Անհրաժեշտ բովանդակության և ծառայությունների առումով ֆորմալ ձևաչափերի գնահատումը պարզեց. www.armstat.am-ն աշխատում է ըստ սպասվածի
2. Ըստ իրենց կարիքների՝ սպառողների տվյալներ գտնելու հնարավորությունների գնահատումը պարզեց. կայքի աշխատանքը, և կայքում տեղաշարժվելը/բովանդակության կառուցվածքը բարելավման կարիք ունեն:
3. Ներկայիս www.armstat.am-ում ենթադրվող փոփոխությունները, որոնք կբավարարեն ուղղակիորեն ներգրավված ՀՀ ԱՎԾ աշխատակիցների, ինչպես նաև Հայաստանի վիճակագրության ազգային և միջազգային սպառողների կարիքները, պահանջում են մեծ ներդրումներ սարքավորումների և համակարգչային ծրարգրերի տեսքով, ինչը դուրս է Թվինինգ ծրագրի շրջանակից:

2. Գնահատում և արդյունքներ

Ինչպես նշվել է վերը, գործողությունն ուներ երկու նպատակ: Գործողության սկզբում ՀՀ ԱՎԾ աշխատակիցները ներկայացրին իրենց տարբեր կայքերի հետ կապված տեսլականը և ցանկությունները:

2.1 ՀՀ ԱՎԾ ընթացիկ կայքերի գնահատում

Տարածման և SS բաժինները նկարագրել են իրենց պահանջները և մտքերը, թե ինչպես կցանկանային զարգացնել՝ www.armstat.am, armstatbank.am և devinfo կայքը UNICEF-ից:

www.armstat.am կայքի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ-ն նույնականացրել է հետևյալ հարցերը.

- վիճակագրական հաշվետվությունների առցանց հանձնման տեխնոլոգիաների մշակում և ներդրում (տվյալների հավաքագրում),
- կայքի կառուցվածքի փոփոխում և խմբավորում,
- հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ժամանակագրական շարքերի արդիականացում ու ինտերակտիվ գրաֆիկական համակարգերի և քարտեզների ստեղծում, ինչպես նաև տվյալների ներբեռնման հնարավորություն,
- սպառողների համար ինտերակտիվ շփման համակարգի ստեղծում,
- միասնական համակարգի ստեղծում՝ “Տվյալների բազաներ” հատվածների համախմբում,
- տվյալների փոխանակման միջազգային ստանդարտների (SDMX) ներդրում:

www.armstatbank.am կայքի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ-ն նույնականացրել է հետևյալ հարցերը.

- բոլոր աղյուսակների ցուցադրման ֆունկցիայի ավելացում,
- վիճակագրական տվյալների ներկայացումը քարտեզների միջոցով,
- աղյուսակների վերնագրերի դասավորման հնարավորություն,
- Armstatbank բազայի հասանելություն www.armstat.am կայքի միջավայրից,
- որոնման համակարգի ստեղծում,
- հղումների օգտագործում:

Devinfo կայքի հետ կապված հարցեր չեն բարձրացվել, քանի որ այն բավարարում է UNCEF-ի և այլ դոնոր կազմակերպությունների կարիքները: Համաձայն ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված ցանցի (google analytics) օգտագործման վիճակագրության՝ devinfo-ի օգտագործումը հարաբերականորեն փոքր է: armstat.am-ի և armstatbank.am-ի օգտագործումն աճում է: Ինքնագնահատումը և առաջարկվող զարգացման ուղիներն ընդհանուր առմամբ համապատասխանում են եվրոպական փորձառություններին: Եվրոպական տեսանկյունից տվյալների հավաքագրման և փոխանակման (SDMX) հարցերը դուրս են տարածման բաժնի տրամաբանական շրջանակից, և փոխարենը՝ դրանք տրամաբանորեն առավել հասցեական են թեմատիկ բաժինների, այսինքն մեթոդաբանական և SS բաժինների համար:

2.2 Ընթացիկ կայքերի փորձագիտական գնահատումները

Ներկայիս կայքը (armstat.am) ստեղծվել է 2009թ.-ին: Այն աստիճանաբար ընդլայնվել և թարմացվել է, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն արտադրել է նոր վիճակագրություն և ավելացրել նոր արտադրանք: 2011-2013թթ. իրականացված առաջին Թվինինգ ծրագրի ընթացքում կայքին

ավելացվեց տվյալների բազա, որը կառուցվել էր շվեդական PX-Web ծրագրի հիման վրա, ինչպես նաև ավելացվեցին որակի նկարագրեր՝ համաձայն ԵՄ առաջարկությունների:

Ներկայիս կայքերը կարող են գնահատվել՝ օգտագործելով երկու կամ ավելի քիչ հիմնովին տարբերվող մոտեցումներ: Առաջին մոտեցումն է համեմատել տրամադրված ծառայությունները և հասանելի բովանդակությունը, որը համապատասխանում է եվրոպական/Եվրոստատի սպասելիքներին: Երկրորդ մոտեցումն է հարցնել սպառողներին իրենց սպասելիքների մասին և օգտագործել հասանելի մեթոդաբանություններ՝ գնահատելու արդյոք կայքը բավարարում է սպառողների պահանջները և սպասելիքները, թե ոչ:

2.3 Ներկայիս armstat.am կայքը

Եվրոպական պահանջներ/լավագույն փորձառություններ

Թվինինգ ծրարգերում հաճախ նպատակն է նույնականացնել կարգավիճակը և համադրել այն եվրոպական լավագույն փորձառությունների և օրենսդրության հետ: Տարածման տիրույթում Եվրոստատն ուղղակիորեն առաջարկում է օրենսդրություն՝ մանրամասնելով ԱՎԻ կայքի հետ կապված պահանջները: Այնուամենայնիվ Փորձառությունների օրենսգրքի (CoP) և Որակի ապահովման շրջանակի (QAF) պահանջները բավարարելու համար ԱՎԻ կայքը պետք է պարունակի կոնկրետ կետեր/վերնագրեր և ծառայություններ:

Հավելված 4-ում շատ ընդհանուր ձևով ուրվագծված են այդ պահանջները: QAF-ը ներկայում թարգմանվում է հայերեն: Երբ QAF-ի հայերեն տարբերակը հասանելի դառնա, առաջարկվում է, որպեսզի ՀՀ ԱՎԾ-ն սիստեմատիկորեն աշխատի QAF-ի համապատասխան ցուցանիշների ուղղությամբ և ապահովի տարածման քաղաքականության/ռազմավարության և www.armstat.am կայքի համապատասխանություն եվրոպական լավագույն փորձին և պահանջներին:

Սպառողների կողմից տեղեկատվությունը որոնելու կարողությունների փորձարկում

Նախքան ամառային արձակուրդները թվինինգ ծրագիրը փորձարկել է ՀՀ ԱՎԾ կայքի անգլերեն տարբերակը՝ օգտագործելով առցանց փորձարկման մեթոդներ www.usertesting.com կայքից: Դանիական փորձի հիման վրա առաջադրանքները հիմնականում արտացոլում էին ապառողներին հետաքրքրող տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ սպառողները քիչ հաջողություններ ունեցան իրենց անհրաժեշտ տեղեկատվության որոնման հարցում: Երբ սպառողներին հաջողվել է տեղեկություն գտնել, դա ավելի շատ ժամանակ է խլել, քան սովորաբար պետք է:
Փորձարկվող անձինք փորձել են օգտագործել www.armstat.am որոնման գործառույթը: Սա անհաջող էր:

Ընթացիկ կայքի տեղեկատվական ճարտարապետություն

Կայքի տրամաբանական հերթականությունը և ներկայացումը շատ կարևոր է այն հարցում, թե ինչպես են սպառողները կարողանում գտնել և օգտագործել իրենց ներկայացված տեղեկատվությունը: Ընդհանուր առմամբ առաջարկվում է, որ տեղեկատվական ճարտարապետությունը և դրա պարզությունը կանոնավոր կերպով փորձարկվի: Սա կարելի է անել պարզ “Մտածիր բարձրաձայն” վարժությամբ: Ներկայացուցչական փորձարկվող անձանց տրվել են առաջադրանքներ, որոնք պետք է կատարվեն կայքում: Այնուհետև սպառողները մտածելով բարձրաձայն ձևակերպում են,

թե ինչպես են մեկնաբանում կայքը և տեղեկատվության ճարտարապետությունը: Այս մեթոդաբանությունն օգտագործվել է առավել առաջատար ձևաչափով արտաքին փորձարկման միջոցով՝ Թվինինգ ծրագրի շրջանակներում:

Դասավորված՝ ըստ արտադրանքի

Դրսից հայացք նետելով, www.armstat.am-ը դասավորված է այնպես, որ արտացոլում է ՀՀ ԱՎԾ կազմակերպական կառուցվածքը և տեղեկատվությունը՝ դասավորված ըստ արտադրանքի տեսակի: Սա «վիճակ» կամ փուլ է, որով անցել են բոլոր ԱՎԻ կայքերը: Պատմականորեն մենք մեր տպագիր շարքերը/հրապարակումները տեղափոխել ենք ինտերնետ, և կայքն արտացոլել է այս արտադրանքից արտադրանք փոխակերպումը տպագիր տարբերակից էլեկտրոնային տարածման: Սակայն կայք այցելող շատ սպառողներ գալիս են կայք՝ չիմանալով արդյոք տեղեկատվությունը, օրինակ որոնվող ցուցանիշները տեղադրված են «Հիմնական վիճակագրական ցուցանիշներ», «Հրապարակումներ», «Ազգային ամփոփ տվյալներ», «Վիճակագրական ցուցանիշներ» բաժիններում, թե մի քանի տվյալների բազաներից մեկում, որոնց կարելի է մուտք գործել անմիջականորեն www.armstat.am կայքից: Ամբողջ փորձը տարբեր եվրոպական ԱՎԻ-ից ցույց է տալիս, որ նման դասավորությունը շփոթեցնում է սպառողներին և հետևաբար մեզէ՝ որպես կազմակերպության վերջին հաշվով հարմար չէ: Սպառողներն ընդհանուր առմամբ հետաքրքրված չեն հասկանալու, թե որն է «տարածքային վիճակագրության» և «հիմնական վիճակագրական տվյալների» վիջև տարբերությունը:

Այլընտրանքն է դասավորել կայքն ըստ թեմաների

Ներկայիս կոնսենսուսը եվրոպական ԱՎԻ-ների միջև կայքն ըստ թեմաների, այլ ոչ ըստ արադրանքի դասավորելն է: Այս դեպքում սպառողը «միայն» ստիպված է/տեղաշարժվել թեմատիկ դաշտում. այսպիսով թեմատիկ դաշտի ներսում ամբողջ համապատասխան վիճակագրությունը, մեթատվյալները և որակի տեղեկատվությունը ներկայացված են: Ներքևում տրված են մի շարք նկարներ, որոնք արտացոլում են կայքի դասավորությունն՝ ըստ թեմաների:

Վիճակագրությունն ըստ թեմայի www.scb.se՝ Շվեդիա



Վիճակագրությունն ըստ թեմաների՝ www.dst.dk – Դանիա



Վիճակագրությունն ըստ թեմաների՝ www.statistik.at Ավստրիա



Արտադրանքից դեպի թեմա կողմնորոշված կայքին անցումը հսկայական և ռեսուրս պահանջող նախաձեռնություն է: Փոխակերպումը տեխնիկապես հնարավոր է միայն, երբ բոլոր տվյալները հասանելի են էլեկտրոնային ձևով, ինչը թույլ է տալիս, որպեսզի տվյալները վերաօգտագործվեն համակարգչային ծրագրի կողմից: ՀՀ ԱՎԾ օրինակում բոլոր տվյալները պետք է տեղափոխվեն www.armstatbank.am նախքան դրանք կարելի կլինի օգտագործել կամ վերաօգտագործել [www.armstat.am-ում](http://www.armstat.am): Որակի հռչակագրերը նույնպես

պետք է տեղափոխվեն տվյալների բազա, որպեսզի հնարավոր լինի դրանց ամբողջական կամ հատված առ հատված օգտագործումը կայքում:

Իմ կարծիքն այն է, որ ՀՀ ԱՎԾ-ն միջինից երկարաժամկետ կտրվածքով ներկայիս կայքից պետք է անցում կատարի դեպի "թեմատիկ կողմնորոշմամբ" կայք: Այս փոփոխությունը հնարավոր չէ իրականացնել կամ դիտարկել ընթացիկ թվինինգ ծրագրի շրջանակներում: Սակայն www.armstat.am-ի փոփոխումը կամ վերանախագծումը պետք է վերջին հաշվով պլանավորվի և իրականացվի ՀՀ ԱՎԾ կողմից:

Կոնտենտի (բովանդակության) կառավարման համակարգ

Համակարգչային ծրագիրը (CMS կամ բովանդակության կառավարման համակարգ), որի վրա հիմնված է www.armstat.am կայքի ներկայիս տարբերակը ոչ ամբողջովին է պարզ ինձ համար: Սակայն ծրագիրը հիմնականում կառուցված է ASP. ASP-ով, կամ սերվերի ակտիվ էջերը ընդհանրապես դադարեցվել են Micrososft-ի կողմից և փոխարինվել ASP.NET, կամ DOT.NET-ով: Ուստի դրա հիմքում ընկած ծրագիրը այլևս համապատասխան չէ և պետք է արդիականացվի ապագայում, ինչն էլ իր հերթին ենթադրում է համակարգչային սարքավորումների արդիականացում:

Սպառողների բավարարվածության հետազոտություն

ՀՀ ԱՎԾ-ն չի կարող ակնկալել, որ սպառողները, որոնք այցելում են ԱՎԾ կայք իրենց նախաձեռնությամբ բացեն և լրացնեն սպառողների բավարարվածության հարցաթերթը այն տարբերակով, ինչ տարբերակով, որ այն դրված է կայքում: Սպառողների և արտադրողների հետ համագործակցությանը նվիրված 1.3 առաքելության ընթացքում (Տիգիսեն և Վուլֆ, 2016թ. փետրվարի 29-ից մարտի 3-ը) տրվել են մի շարք առաջարկություններ: Եթե հարցաթերթն օգտագործվելու է չափելու համար www.armstat.am և www.armstatbank.am սպառողների կարծիքները, ապա ամենայն հավանականությամբ անհրաժեշտ է գործարկել հարցաթերթը, երբ սպառողները մուտք են գործում կայք (Pop-up/հայտնվել) կամ, երբ նրանք դուրս են գալիս կայքից (Pop-under):
Կարևոր է չխառնել արդյունքները և առանձնացնել նրանք, որ ստացվել են ուղղակիորեն կայք այցելելուց, և նրանք որոնք սպառողներն ապահովել են հարցաթերթը կայքից ներբեռնելով և լրացնելով, երբ նրանց էլ-փոստով խնդրվել է: Բոլոր պրակտիկ նպատակների համար սրա արդյունքները կլինեն հետազոտության 2 տարբեր համակցություններ: Ցանցային հարցաթերթը/հետազոտությունները կարող են իրականացվել առավել խելացի, կամ պակաս խելացի ձևով: Ինչպես նշվել է Տիգիսենի կողմից որոշ ծրագրերի օգտագործումը, ինչպիսին SurveyMonkey-ն է թույլ կտա ՀՀ ԱՎԾ-ին հասցեագրել սպառողների մի մասին, և խուսափել դա կիրառել այն սպառողների հետ, որոնք արդեն իսկ լրացրել են հարցաթերթը:

Քարտեզներ և պատկերագրում

ՀՀ ԱՎԾ-ի աշխատակիցների կարծիքով www.armstat.am –ին պակասում են քարտեզներ և պատկերագրումը, ինտերակտիվ կապը սպառողների և կայքի միջև: Դժվար է չհամաձայնել այս կարծիքի հետ:



Վերևի պատկերը ցույց է տալիս բնակչության դինամիկ բուրգը (http://bl.ocks.org/badosa/6103806), որը կարող է նկարագրվել որպես ամենակարևոր (և առաջին) պատկերագրումներից մեկը՝ ընդունված վիճակագրական միջազգային հանրության կողմից: Դա իրականացնելու համար անհրաժեշտ են բնակչության դինամիկ շարքերը՝ դասակարգված ըստ սեռի:

Բնակչության խտություն. Նորվեգիա



Վերևի նկարը (http://bl.ocks.org/badosa/7856244) մեկ այլ «դասական» պատկերագրում է, որը ցույց տալիս բնակչության խտության քարտեզն ըստ համայնքի:

Գնաճի պատկերը, Շվեդիա

Swedish Inflation Calculator



Վերևի պատկերը (http://bl.ocks.org/badosa/20735ba5bbecbc079d78) ցույց է տալիս սպառողական գնի ինդեքսը և բացատրում սպառողներին շվեդական կրոնի արժեքը տարբեր ժամանակներում: Սա նաև դասական պատկերագրում է ԱՎԻ-ների շրջանում: Նմանատիպ ինտերակտիվ գործողությունները և պատկերագրումները, որոնք այս պահին պակասում են www.armstat.am-ին սկզբունքայնորեն կարող են ավելացվել: Այս պահին խնդիրներից մեկն այն է, որ armstatbank.am և armstat.am-ը չունեն պահանջվող հասանելի տվյալներ: Հետևաբար առաջին տրամաբանական քայլը կլինի նմանատիպ տվյալներ arm-statbank.am-ին ավելացնելը:

2.4 Ներկայիս կայքը. Armstatbank.am

www.armstatbank.am-ը գործարկվել է 2012թ. վերջում PX-Web- առաջին dot.Net տարբերակի օգտագործմամբ: Այն ժամանակվանից ծրագիրն առնվազն մեկ անգամ տարեկան թարմացվել է: Սույն առաքելության ընթացքում PX-Web (1.5) տրամադրվել է ծրագրի ամենավերջին տարբերակը (2015թ. դեկտեմբեր): 2015թ. դեկտեմբերի տարբերակն անդրադառնում է ՀՀ ԱՎԾ կողմից բարձրացված մի շարք բարելավումների:



Հիմնական կարիքներից մեկը որոնման դաշտի ավելացումն է: Որոնումը armstatbank.am-ում սահմանափակված է աղյուսակներով:

PX-Web 2015թ. դեկտեմբերի տարբերակը նաև armstatbank.am ավելացնում է API (հավելվածի ծրագրավորման ինտերֆեյս): API-ն սպառողներին կամ armstat.am կայքին կտա դեպի տվյալներ մուտքի, կարդալու և դրանք այլ կայքում զուտ մեխանիկորեն ներկայացնելու հնարավորություն: API-ն այնուհետ հնարավոր կդարձնի armstatbank.am-ի օգտագործումը՝ որպես տվյալների պահոց հիմնական armstat.am կայքի համար և հարթակ ինտերակտիվ գործողությունների համար: Հիմնական պատկերագրումները ներկայացված նախորդ բաժնում տեխնիկապես հիմնված են PX-Web –ից այսպես կոչված JASON-STAT ձևաչափով տվյալներ պատկերելու և այդ տվյալները պատկերագրման տարբեր բաց գործիքների օգտագործմամբ փոփոխելու վրա:

Armstatbank-ի ընդգրկվածությունը

2012թ.-ից ի վեր երբ ստեղծվեց www.armstatbank.am-ը ՀՀ ԱՎԾ-ն մեծ աշխատանք է կատարել բազան տվյալներով լցնելու և արդեն իսկ բազայում առկա տվյալները արդիականացնելու համար: Այս աշխատանքը շատ խրախուսելի է: Սակայն ՀՀ ԱՎԾ-ն պետք է նպատակ հետապնդի բոլոր հասանելի տվյալները համակարգում տեղադրելու հարցում: Երբ սա իրականացվի հնարավոր կլինի armstat.am-ը տեղափոխել նոր տեխնիկական հարթակ և կազմակերպել թեմաների վրա հիմնված բովանդակություն:

Armstatbank.am քարտեզներ

Տեխնիկապես հնարավոր է ավելացնել քարտեզներ, սակայն դրա համար հարկավոր է որոշ աշխատանք կատարել: Սակայն նախքան դրան անդրադառնալը ՀՀ ԱՎԾ-ն պետք է քայլ կատարի հավաստիանալու, որ քարտեզներում ներկայացման ենթակա տվյալներն առկա են տվյալների բազայում: Ներկայում շատ քիչ տվյալներ են առկա աշխարհագրական դասակարգմամբ, կամ չկան առհասարակ: Միայն հարաբերական տվյալներն են (տոկոսներ և percentiles), որ լավ են երևում քարտեզների վրա: Հույս կա, որ

հաջորդ գործողությունը կարող է ցուցադրել քարտեզներ, բայց պետք է ավելի շատ կենտրոնանալ համապատասխան տվյալները տեղադրելու վրա:

2.5 Առաջարկություններ կարճաժամկետ փոփոխությունների համար www.armstat.am

Ինչպես նշվել է վերը, փորձագետի կարծիքով armstat.am կայքը պետք է արդիականացվի: Արդիականացումը պետք է փոխի armstat.am-ը թեմատիկ կողմնորոշմամբ տեղաշարժման, որը ենթադրում է ներկայիս համակարգչային սարքավորումների և ծրագրերի արդիականացում: Նմանատիպ ծրագիրն ուղղակի դուրս է թվինինգ ծրագրի շրջանակից:

Կարճաժամկետ կտրվածքով (նախքան Թվինինգի ավարտը) սակայն առաջարկվում է իրականացնել www.armstat.am-ի գլխավոր էջի մաքրման փոքրիկ աշխատանքներ: Ներքևում նկարագրված միջոցառումները պետք է որ հնարավոր լինեն իրականացման համար CMS համակարգում խմբագրական փոփոխություններ կատարելու և CMS-ի կողմից օգտագործվող էջերի տեսքի հետ փոքրիկ փոփոխություններ կատարելու միջոցով:

Ավելացնել նոր "Մեր մասին" կետ

Գլխավոր էջն ունի չափազանց շատ վերնագրեր/հղումներ: Մեկ ընդհանուր "Մեր մասին" բաժին ներդնելը համահունչ կլինի մնացած ԱՎԻ-ների մեծ մասի փորձառությանը: Առաջարկվում է, որպեսզի այս նոր գլխավոր բաժինը պարունակի ներկայիս վերնագրերը. *Հայաստանի ազգային վիճակագրական ծառայություն, Վիճակագրության պետական խորհուրդ, Աշխատանքների ծրագրեր և հաշվետվություններ, Օրենսդրություն:* Նմանատիպ տեղեկատվություն որոնող սպառողների համար կպահանջվի լրացուցիչ սեղմում, բայց սույն վերնագրերի տեղափոխումը գլխավոր էջը կբեռնաթափի և կպարզեցնի: *ՀՀ ԱՎԾ մասին* բաժնի ներքո ենթավերնագրերի դասավորությունը առաջարկվում է կատարել քարտերի դասավորության մեթոդաբանության միջոցով:

Դիտարկել նոր կետի ավելացումը մեթատվյալների համար

Դասակարգիչները և Մեթոդաբանությունը, Մեթատվյալները և Վիճակագրական Բառարանը սկզբունքորեն և տրամաբանորեն կապված են և ՀՀ ԱՎԾ-ն պետք է դիտարկի սույն վերնագրերը միավորելը նոր գլխավոր վերնագրի ներքո: Օգտագործեք քարտեր դասավորելը և սպառողների հետ քննարկումները՝ ամենահարմար վերնագիրը սահմանելու համար:

Հեռացնել հնացած կոնտենտը

Սկզբում շատ գնահատելի ծառայություն էր սպառողներին տեղեկացնելը PDF ձևաչափի և Acrobat reader-ի մասին: Այսօր Acrobat և Zip ֆայլերով նյութերը ներբեռնելու հղումները այլևս նպատակային չեն և պետք է հանվեն գլխավոր էջից:

Պարզեցնել ներքևի ձախ անկյունը

Գլխավոր էջի ներքևի ձախ անկյունում առկա են մի շարք հղումներ, որոնք սպառողներից շատերի, եթե ոչ բոլորի համար նպատակային չեն: Այս հղումները պետք է հանվեն գլխավոր էջից և դրվեն ավելի համապատասխան տեղում: «Ինչպես գրել մամուլի հաղորդագրություն» կետը հիմնականում ՀՀ ԱՎԾ ներքին օգտագործման համար են և չպետք է պատկանեն գլխավոր էջին:

What is an Administrative Register?

Objective Reasons of the Lack of Trust in Official Statistics

Citizens reception order in the NSS RA (only in Armenian)

Decisions ON APPROVEMENT OF THE ORDER ON PROTECTION OF STATISTICAL CONFIDENTIALITY

Questionnaire user satisfaction survey

Handbook "How to write a press release"

Handbook "How to organize a press conference"

Դիտարկել որոնման դաշտի տեղափոխումը

Որոնման դաշտը ներկայում տեղակայված է գլխավոր էջի ներքևի ձախ անկյունում: Ընդհանուր առմամբ սպառողներն ակնկալում են, որ որոնման դաշտը լինի կայքի վերևի հատվածում: Որոնման կոճակի որակը չի գնահատվել:

Տեղաշարժել հիմնական վիճակագրական տվյալները դեպի վերև

Ներկայում թողարկման օրացույցները շատ տեղ են զբաղեցնում: Պարզ առաջարկություն կարող է լինել *Հիմնական վիճակագրական տվյալների* և *Թողարկման օրացույցների* հերթականության փոփոխումը, այնպես որ *Հիմնական վիճակագրական տվյալները* լինեն սկզբում:

Release Calendars

Pre-release Calendar of Statistical Indicators for 2016	Calendar of Statistical Publications	Advance Release Calendar by SDDS	Gross Domestic Product Revision Timetable

Main Statistical Data

	2 quarter 2016	in comparison with same period of last year (%)	in comparison with previous period (%)
Gross Domestic Product at market prices, mln. drams	1128072.6	101.5	123.9

more

	Jul 2016	in comparison with same period of last year (%)	in comparison with previous period (%)
Indicator of economic activity	-	95.7	102.5
Volume of gross agriculture output, mln. drams	89738.0	96.2	150.6
Consumer Price Index, %	-	98.7	97.7
External Trade Turnover, mln. USA dollars	382.8	98.7	92.9
Export, mln. USA dollars	150.9	113.2	96.7
Import, mln. USA dollars	231.9	91.0	90.5
Average monthly nominal wages, drams	195791.0	99.5	106.9

more

Միավորել թողարկման օրացույցները մեկ վերնագրի ներքո

Կայքում թողարկման օրացույց ունենալը CoP-ից և QAF-ից բխող պահանջներից մեկն է: Գլխավոր էջին չորս տարբեր օրացույցներ ունենալը փոքր ինչ նման է չափազանց շատ տորթ ուտելուն:

Հետևաբար ես առաջարկում եմ 4 օրացույցները դնել նոր էջում և անվանել այն *Թողարկումներ և վերանայումներ* կամ նման ինչ-որ բան: *Թողարկումներ և վերանայումներ* վերնագիրը կարող է դրվել կամ հիմնական ձախ պանելում, կամ ամենավերևի կարմիր վանդակում:

Ուշացումների և օրացույցում փոփոխությունների ցուցակի ավելացում

Ամբողջությամբ Եվրոստատի սպասելիքներին բավարարելու համար կայքը պետք է պարունակի տեղեկություն հրապարակման ժամանակացույցի ուշացումների մասին: Հետևաբար առաջարկվում է ավելացնել նմանատիպ վերնագիր մշակված վերնագրի ներքո:

3. Եզրակացություններ և առաջարկություններ

Գործողության ընթացքում կատարված քննարկումների հիման վրա արվել են հետևյալ եզրակացությունները,

- Armstat.am-ը դասավորել ըստ արտադրանքի/տեղեկատվության տեսակն ըստ թեմայի
- Չկան ԵՄ ուղղակի պահանջներ, դրանք պետք է բխեն CoP (փորձառության օրենսգրքից) & QAF (որակի ապահովման շրջանակից) √
- Աշխատակիցների փոփոխության տեսլականը պետք է արտացոլի լավագույն փորձառությունները
- Armstat.am-ի կառուցվածքը կարող է փոփոխությունների ենթարկվել
- www.armstat.am-ի հիմքում ընկած SS հարթակ՝ այրվող հարց
- Լավագույն փորձը ներդնելու համար անհրաժեշտ են նոր համակարգչային սարքավորումներ և **ծրագրեր**
- PX-Web – www.armstatbank.am-ը պետք է արդիականացվի
- www.armstatbank.am-ի թարմացման աշխատանքները մեկնարկել են
- armstat.am –ի բարելավման ուղղությամբ մի շարք կարճաժամկետ քայլեր են առաջարկվել

Եզրակացությունների հիման վրա գործողության ընթացքում ՀՀ ԱՎԾ-ին առաջարկվում է նախաձեռնել ներքևի աղյուսակում նկարագրված գործողությունները:

Կայքերի բարելավմանն ուղղված հաջորդ առաքելությունը տեղի կունենա 2017թ. հունվարի 17-20-ը:

Գործողություն	Վերջնաժամկետ	Պատասխանատու անձ
Իրականացնել www.armstat.am –ի ինքնագնահատում համաձայն CoP և QAF՝ օգտագործելով Հավելված 4-ի ձևը		ՀՀ ԱՎԾ
Դիտարկել հրապարակումների վերանայման և ուշացումների ցանկի ավելացումը	Ենթակա է իրականացման 2017թ. հունվարից	ՀՀ ԱՎԾ
Որոշում կայացնել կայքում սպառողների բավարավածության հետազոտության վերաբերյալ		ՀՀ ԱՎԾ
Պարզեցնել armstat.am-ը դասավորել քարտերը, պատրաստել թղթային մակետ	2016թ. դեկտեմբերի վերջ	ՀՀ ԱՎԾ
Գնահատել և քննարկել առաջարկությունները armstat.am-ի կարճաժամկետ փոփոխությունների վերաբերյալ		ՀՀ ԱՎԾ
Իրկանացնել պարզեցված armstat.am	2017թ. հունվար – ապրիլ	ՀՀ ԱՎԾ. հիմնականում SS Նախաձեռնել սա վերահսկող առաքելության ընթացքում, որը պլանավորված է 2017թ. հունվարին
Արդիականացնել armstatbank.am-ը PX-Web 2015թ. դեկտեմբերի տարբերակով	Սկսվել է 2016թ. սեպտեմբերից	ՀՀ ԱՎԾ
Պլանավորել ավելի շատ տվյալների ավելացում՝ շեշտադրելով սեռային, տոկոսային և տարածքային բաշխումը	2016թ. նոյեմբեր	ՀՀ ԱՎԾ Տարածում, այլ ոչ SS
Ավելացնել ամենահաճախ որոնվող տվյալները՝ քարտեզագրում և պատկերագրում իրականացնելու համար	2016թ. դեկտեմբեր	ՀՀ ԱՎԾ Տարածում և SS

Նույնականացնել բացակայող տվյալներն ամբողջությամբ. Քարտեզագրել ՀՀ ԱՎԾ ամբողջ արտադրումը armstat.am-ի բովանդակության առնչությամբ	2017թ. մարտ	ՀՀ ԱՎԾ
Ավելացնել բոլոր բացակայող տվյալները	2017թ. վերջ	ՀՀ ԱՎԾ – Հիշել ներառել նաև համապատասխան թեմատիկ բաժիններին

Հավելված 1. Տեխնիկական առաջադրանք

Տեխնիկական առաջադրանք

ԵՄ Թվինինգ ծրագիր AM/14/ENP/ST/15

2016թ. օգոստոսի 30-ից սեպտեմբերի 2

Բաղադրիչ 1. Վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ

Գործողություն 1.5. Կայքի բարելավում I

0. Բաղադրիչի պարտադիր արդյունքներ և չափանիշներ

Պարտադիր արդյունքներ.

- Վիճակագրական տեղեկատվության տարածման բարելավված համակարգ (2017թ. հուլիս)

Չափանիշներ.

- Պատրաստի վիճակագրական տեղեկատվության տարածման համակարգ (2017թ. հուլիս)
- Մշակված տեղեկատվության տարածման համակարգի ռազմավարություն՝ընդունված Վիճակագրության պետական խորհրդի կողմից (2017թ. հուլիս)
- Սպառողների բավարարվածության հետազոտության արդիականացված, փորձարկված և ՀՀ ԱՎԾ կայքում հրապարակված հարցաթերթ (2017թ. հուլիս)
- Վիճակագրական տեղեկատվության տարածման գծով վերապատրաստված ԱՎԾ անձնակազմ (2017թ. հուլիս)

1. Գործողության նպատակը

- Քննարկումներ, թե ինչպես բարելավել կայքը՝ բարձրացնելու համար սպառողների կողմից օգտագործման հարմարավետության աստիճանը
- Ծրագրի շրջանակներում պոտենցիալ բարելավման համար ընթացիկ ցանցային հարթակի գնահատում

2. Գործողության նպատակը

- Առաջարկություն կայքի բարելավման վերաբերյալ
- Հաջորդ գործողության ծրագիրը սահմանված է (1.6 ծրագրված է 2017թ. հունվարին)

Հավելված 2. Առաքելության ծրագիրը

Ժամանակ	Վայր	Միջոցառում	Նպատակ/մանրամասներ
Երեքշաբթի, կեսօր *(30/8)*	ՀՀ ԱՎԾ	ԹՄԽ հետ հանդիպում	Քննարկել շաբաթվա ծրագիրը
Երեքշաբթի, կեսօրից հետո *(30/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Իրավիճակի գնահատում և ՇԵ կողմից ընթացիկ առաքելությունից ակնկալվող արդյունքի ներկայացում
Չորեքշաբթի, առավոտ *(31/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Քննարկում կայքի բարելավման և սպառողների կողմից կայքի օգտագործման հարմարավետության աստիճանի բարձրացման վերաբերյալ
Չորեքշաբթի, կեսօրից հետո *(31/8)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Ծրագրի շրջանակներում պոտենցիալ բարելավման ընթացիկ ցանցային հարթակի գնահատում
Հինգշաբթի, առավոտ *(1/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Շարունակական քննարկումներ կայքի բարելավման նպատակով՝ սպառողների կողմից կայքի օգտագործման հարմարավետության աստիճանի բարձրացման համար
Հինգշաբթի, կեսօրից հետո *(1/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի և ՇԵ փորձագետների հետ	Վերջնական եզրակացությունների, ճանապարհային քարտեզի և առաքելության հաշվետվության պատրաստում
Ուրբաթ, առավոտ *(2/9)*	ՀՀ ԱՎԾ	Հանդիպում ՇԵ բաղադրիչի ղեկավարի հետ Չպլանավորված հանդիպումներ	ԱԵ փորձագետների բացահայտումների ներկայացում և ձեռքբերված եզրակացությունների համաձայնեցում Վերջնական պարզաբանումներ ՇԵ փորձագետների հետ, հաշվետվության պատրաստում և ներկայացում ՇԵ ծրագրի ղեկավարին
Ուրբաթ, կեսօրից հետո *(2/9)*	ՀՀ ԱՎԾ	Ամփոփիչ հանդիպում ԱԵ ծրագրի ղեկավարի հետ	Եզրակացություններ, որոշումներ և դրանց հետևանքները հաջորդ գործողության համար և ՇԵ փորձագետների աշխատանքային ծրագիր

Հավելված 3. Հանդիպումներին մասնակցած անձինք

<u>ՀՀ ԱՎԾ</u>

Բաղադրիչի ղեկավարներ

- Պրն Ստեփան Մնացականյան
- Տկն Անահիտ Սաֆյան
- Պրն Վանուշ Դավթյան
- Տկն Նարինե Մուշեղյան

Այլ աշխատակիցներ

- Տկն. Սիլվա Ուլուբաբյան
- Տկն Նելլի Մարգարյան
- Տկն Գոհար Նշանյան
- Տկն Ալինա Հունանյան
- Տկն Արմինե Մարտիկյան
- Տկն Լիլիթ Կարապետյան
- Տկն Աիդա Մարտիրոսյան
- Տկն Արմենուհի Առուշանյան
- Տկն Սոնա Շախգելդյան

<u>ԹՄԽ թիմ</u>

- Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, Թվինինգ մշտական խորհրդատու
- Անուշ Պողոսյան, ԹՄԽ թարգմանիչ

Հավելված 4. Փորձառության օրենսգրքից ընտրված սկզբունքներ և ցուցանիշներ

Հայկական կայքի և տեղեկատվության տարածման այլ էլեկտրոնային ձևերի գնահատմանը համապատասխանող ընտրված սկզբունքներ և ցուցանիշներ

CoP սկզբունք	**ՀՀ ԱՎԾ կողմից պահանջի բավարարում**	**Բարելավումների վերաբերյալ առաջարկություններ**
Սկզբունք 6. Անաչառություն և օբյեկտիվություն		
Հրապարակված վիճակագրությունում հայտնաբերված սխալներն ուղղվում են հնարավոր ամենաշուտ ամսաթվին և հրապարակվում		
Կիրառված մեթոդների և ընթացակարգերի մասին տեղեկատվությունը հասանելի է հանրությանը		
Վիճակագրական թողարկումների ամսաթիվը և ժամանակը նախապես հայտարարվում են		
Բոլոր սպառողները միաժամանակ մուտքի հնարավորություն ունեն վիճակագրական թողարկումներին: Թողարկումից առաջ ցանկացած արտոնյալ մուտք արտաքին սպառողի համար սահմանափակ է, վերահսկվում և հրապարակվում է: Տեղեկատվության արտահոսքի դեպքում թողարկման հարցերը պետք է վերանայվեն անաչառության ապահովման նպատակով:		
Սկզբունք 11. Արդիականություն		
Առկա են սպառողների հետ խորհրդակցության, գոյություն ունեցող վիճակագրության՝ սպառողների կարիքները բավարարելու առումով արդիականության և օգտագործելիության, և նոր ծագող կարիքների և գերակայությունների վերաբերյալ խորհրդատվության		

գործընթացներ		
Գերակա կարիքները բավարավում են և արտացոլվում աշխատանքային ծրագրում		
Սկզբունք 13. Յուրաժամանակություն և ճշտապահություն		
Յուրաժամանակությունը բավարարում է եվրոպական և այլ միջազգային ստանդարտների պահանջները		
Յուրաժամանակությունը բավարարում է թողարկման եվրոպական և այլ միջազգային ստանդարտների պահանջները		
Վիճակագրության թողարկման օրվա ստանդարտ ժամը հրապարակվում է		
Տարածման հրապարակված ժամանակացույցից շեղումը հրապարակվում և հիմնավորվում է նախապես, և սահմանվում է թողարկման նոր ամսաթիվ		
Սկբունք 15. Մատչելիություն և պարզություն		
Վիճակագրությունը և համապատասխան մեթատվյալները ներկայացվում և արխիվացվում են այն ձևով, որը դյուրինացնում է ճիշտ մեկնաբանումը և իմաստալից համադրումները		
Տարածման ծառայություններն օգտվում են տեղեկատվության և հաղորդակցության արդի տեխնոլոգիաներից և, եթե հարկն է, ավանդական թղթային տարբերակներից		
Մեթատվյալները փաստաթղթավորվում են համաձայն մեթատվյալների ստանդարտացված համակարգերի		
Սպառողները տեղեկացվում են վիճակագրական արդյունքների որակի մասին՝ համաձայն եվրոպական վիճակագրության որակի չափանիշների		